

ԳԼՈՒԽ

6

ՄՈԴՈՒԼ ԵՎ ՔԱՌԱԿՈՒՍԻ ԱՐՄԱՏ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ

§3

ՄՈԴՈՒԼ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Կարողություն, հմտություն

1. Բանաձևը գրեք անհավասարման տեսքով և լուծեք ստացված անհավասարումը.
ա. $x \in (-\infty, -7) \cup (7, \infty)$, բ. $x \in (-\infty, -4) \cup (4, \infty)$:

Կիրառում, մոդելավորում

2. Կշեռքի մի նժարին դրված մթերքը կշռելու համար մյուս նժարին դրեցին 5 կգ կշռաքար, որից հետո այդ նժարը թեքվեց ներքև: Որքան էր կշռված մթերքի քանակությունը:
3. Գնացքը, որի երկարությունը 250 մետր էր, շարժվում էր 30 կմ/ժ արագությամբ և ժամը 12 -ին պետք է հատեր մայրուղին: Ինչ արագությամբ պետք է վարեր ավտոմեքենան մայրուղով դեպի խաչմերուկ շարժվող վարորդը, որպեսզի չհանդիպեր գնացքին, եթե նա ժամը 1150 -ին գտնվում էր խաչմերուկից 500 մետր հեռավորության վրա:

4. Գնացքում ուղևորների ընդունումը կատարվում էր մինչև ժամը 14:30: Ուղևորը, որ ժամը 10:10–ին գտնվում էր գնացքից 150 կմ հեռավորության վրա, հաստատուն արագությամբ վարեց ավտոմեքենան, և այն կանգնեցնելուց հետո մինչև գնացքին հասնելը ծախսեց ևս 20 րոպե, բայց չհասցրեց գնացք նստել: Ի՞նչ արագությամբ էր վարել ավտոմեքենան ուղևորը: